**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար սեդան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2023 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50-1» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի մարտի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված 4 հատ սեդան թափքով մեքենաներից 2 հատ սեդան թափքով մեքենաների մատակարարման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի շրջանակում 06.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարվել է լրացում:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ 29.12.2023Թ. N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50-1» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ 06.03.2024Թ. N 1 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «15» «03» 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ռեդինետ Մոթորս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Մկրտչյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 29.12.2023թ. կնքված N «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/50-1» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Պայմանագրի **33 999 999.60 (երեսուներեք միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունինը ՀՀ դրամ վաթսուն ՀՀ լումա)** ՀՀ դրամ ընդհանուր գնից Պայմանագրի Հավելված N 2-ով նախատեսված 4 հատ սեդան թափքով մեքենաներից 2 հատ սեդան թափքով մեքենաների մասով **16 999 999.80 (տասնվեց միլիոն ինը հարյուր իննսունինը հազար ինը հարյուր իննսունինը ՀՀ դրամ ութսուն ՀՀ լումա)** ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը և ապրանքների մատակարարման անհրաժեշտությունը՝ Կողմերը որոշեցին.

1.1. Պայմանագրի շրջանակում 06.03.2024թ. կնքված N 1 համաձայնագրի N 1 հավելվածով հաստատված «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ»-ում կատարել լրացում՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելված N 1-ը հանդիսանում է N 2 համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ***Դատական դեպարտամենտ*** | ***«Ռեդինետ Մոթորս» ՍՊԸ*** |
| Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1 | Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 81 |
| ՀՎՀՀ՝ 02583241 | ՀՎՀՀ՝ 03563554 |
| Հ/Հ՝ 900011039816, 900011025757 | Հ/Հ՝ 2052822251891001 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան | Տնօրեն՝ Ա. Մկրտչյան |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

**Հավելված N 1**
**« 13 » « 03 » 2024թ. կնքված N 2 համաձայնագրի**

*(Հավելված N 1*
*«06» «03» 2024թ. կնքված N 1 համաձայնագրի)*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ապրանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| **900011039816** | | | | | | | | | | | | | |
| 1 | 34111130/1 | Սեդան թափքով մեքենաներ | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | **16 999 999.80** |
| **900011025757** | | | | | | | | | | | | | |
| 1 | 34111130/2 | Սեդան թափքով մեքենաներ | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | 16 999 999.80 | **16 999 999.80** |

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
***Դատական դեպարտամենտ***
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011039816, 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան

/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Ռեդինետ Մոթորս» ՍՊԸ***
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ավան, Բաբաջանյան 81
ՀՎՀՀ՝ 03563554
Հ/Հ՝ 2052822251891001
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ա. Մկրտչյան

/ստորագրություն/
Կ.Տ